

Անահիտ Զ. Ադիլխանյան
Բանաս. գիտ. թեկնածու

«ԴՈՒ»/«ԴՈՒՔ» ԴԻՄԵԼԱԶԵՎԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԷԹԻԿԵՏՈՒՄ*

Բանալի բառեր – խոսքային էթիկետ, դու/Դուք դիմելաձևեր, հաղորդակցական իրավիճակ, սոցիալական դեր, պաշտոնական-կիսապաշտոնական իրադրություն, ծանոթության աստիճան, մտերմական-հարազատական հարաբերություն, խոսող-խոսակիցների բնույթ, հարաբերությունների փոփոխություն, **Դուք**-ից **դու**-ի անցում, **դու**-ից **Դուք**-ի անցում:

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի և շարունակում է ստեղծել խոսքային էթիկետի կանոնների իր համակարգը: Այդ համակարգում սովորաբար միախառնված են հանրալեզվաբանական, ազգալեզվաբանական (էթնոլեզվաբանական), հոգելեզվաբանական մոտեցումները: Տարբեր դարաշրջաններում, տարբեր հասարակարգերում մարդիկ առանձնացել են իրենց բարոյաժողովրդական կերտվածքով, գաղափարներով, գիտակրթական մակարդակով, մշակույթով, ավանդույթներով: Դրանցով պայմանավորված՝ մարդկային հարաբերություններում փոխվել են նաև դիմելաձևերի նորմերը:

Հայերենին բնորոշ առանձնահատկություններից մեկը խոսակցին մատնանշող երկրորդ դեմքի եզակի թվի արտահայտման տարբերակային ձևերի՝ «**դու**» և «**Դուք**» դերանունների գործածությունն է: Պակաս կարևոր չէ «**դուք**» և «**Դուք**» դիմելաձևերի գործածությունը, որը հատկանշվում է դիմային ու ձևային նույնության հիմքի վրա (մեծատառով գործածությունը գրավոր խոսքին բնորոշ տարբերակիչ հատկանիշ է) դրսևորվող թվային հակադրությամբ: Երկու դեպքում էլ ճիշտ կամ սխալ բառընտրության մասին հուշում են դրանց կողքի բայերը՝ իրենց դիմաթվային քերականական հատկանիշներով:

Դու դերանվան՝ **Դուք**-ի վերածվելն ունի իր նախապատմությունը: «Ըստ ավանդության՝ Հին Հռոմում եռապետության տիրապետության ժամանակ երեք տիրակալներից ամեն մեկը խոսելիս պետք է **մենք** ասեր, քանի որ խոսում էր երեքի անունից, իսկ նրանց դիմողները՝ **դուք**, քանի որ դիմում

ԺԱ (ԺԷ) փայտ, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019

ՎԿՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.08.2018:

էին երեքին: Հետագայում դիմելու այդ հոգնակի ձևը տարածվեց իբրև կիրթ, հարգալից խոսելու ձև»¹:

Ըստ հին վկայությունների՝ **Դուք** դիմելաձևը սկսել է գործածվել չորրորդ դարում Հռոմեական կայսրության շրջանում (**tu-դու, vos-Դուք**. հռոմեական միապետներին դիմել են **Դուք**-ով)²: Հետագայում՝ արդեն Վերածննդի դարաշրջանում, այդ դիմելաձևը սկսեցին գործածել եվրոպական ազգերը. իբրև հարգանքի նշան՝ ավագները կրտսերներին դիմում էին **դու**-ով, իսկ կրտսերներն ավագներին՝ **Դուք**-ով: **Դու**-ի նշանակությամբ **Դուք**-ի գործածության սաղմերը նշմարվում են միջին դարերում եվրոպական գրականության մեջ: 16-րդ դարում այդ դիմելաձևը Եվրոպայից ներթափանցում է ռուսաց լեզվի մեջ, սակայն որպես դիմելաձև՝ **Դուք**-ը պաշտոնապես սկսել է գործածվել Պետրոս Առաջին կայսեր ժամանակ. այն ոչ թե հարգանքի արտահայտման ձև էր, այլ ընդգծում էր մարդու դասակարգային պատկանելությունը (ազնվականներին դիմում էին **Դուք**-ով, սոցիալական դիրքով կամ ծագումով ցածր դասի մարդկանց՝ **դու**-ով)³: 19-րդ դարում քաղաքավարական-հարգական **Դուք** դիմելաձևը գործածական էր նաև հայերենում: Հր. Աճառյանն անդրադարձել է այս խնդրին՝ նշելով. «Հին հայերը, հույները և հռոմեացիք նման սովորություն չունեին. ամեն աստիճանի մարդկանց, առանց խտրության, ասում էին **դու**. նույնիսկ կայսրերին և աստվածներին»⁴: Այդ են վկայում թե՛ քրիստոնեական աղոթքները (Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն **քո**, եկեսցէ արքայութիւն **քո**, եղիցին կամք **քո** որպէս յերկինս և յերկրի...), թե՛ հայ պատմիչների գործերը (օրինակ՝ Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» գրքից. «Այն գործը, որ պատվիրեցիք, կատարեցի, ո՛վ առաքինի. հայոց պատերազմի մասին հրամայեցիք (գրել), որի մեջ քչերի հանդեպ շատերն առաքինի գտնվեցին»⁵), թե՛ 18-րդ դարից առաջ ընկած դեպքերը նկարագրող պատմավեպերը, որոնցում, որպես օրինաչափություն, բոլոր կերպարները՝ տեր թե՛ ծառա, միմյանց դիմում են **դու**-ով: Օրինակ՝ Բաֆֆու «Սամվել» վեպից. «Բարով, Արբակ, ի՛նչ կա - հարցնում է Սամվելը: - **Քո** ողջությունը,- պատասխանեց ծերունին»: Սակայն այս նույն վեպում նկատվում է քաղաքավարական **Դուք** ձևի գործածություն: «Շապուհ արքան այնպիսի չարաչար մահով սպանել տվեց **ձեր (Ձեր)** հորեղբորը, **ձեր** հայրը հետամուտ եղավ ստանալ սպարապետությունը: **Ձեզ** հայտնի է, տեր իմ, թե որպիսի խաբեությամբ Շապուհ արքան մեր Արշակ թագավորին և **ձեր** հորեղբորը կանչեց Տիգրոն...»⁶: Հավանաբար Բաֆֆին անուշադրության է մատնել այն հանգամանքը, որ հին հայերը քաղաքավարական **Դուք** ձևը 4-րդ դարում չէին կարող ունենալ: Մնացած պատմավեպերում՝ ծերենցի «Երկունք Թ դարու», Մուրացանի «Գևորգ Մարգալետունի», Դերենիկ Դեմիրձյանի «Վարդանանք», չի կիրառվում **Դուք** ձևը, քանի որ այդ հեղինակները համոզված էին, որ մինչև 19-րդ դար մարդիկ միմյանց հետ չէին կարող խոսել **Դուք**-

1 Հալավերդյան Լևոն, Զրույցներ լեզվի մասին, Եր., 1986, էջ 173:

2 Стів інтересные - історії. in. ua. 2015/07.youthou.html.

3 Стів web-капіche. Ru/275-обрасchenie-na-vy.html.

4 Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 2, Եր., 1952, էջ 82:

5 Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր., 1989, էջ 7:

6 Բաֆֆի, Սամվել, Եր., 1967, էջ 64:

ով: Այժմ անդրադառնանք այն հարցին, թե **դու/Գուք** դիմելաձևերը հայերենի խոսքային էթիկետում գործածության ինչ յուրահատկություններ ունեն:

Առաջին հերթին խոսենք այս բառաձևերի նշանակության մասին: Ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»՝ «**Գու**»-ն ցույց է տալիս այն անձը, որին դիմում է խոսողը իբրև խոսակցի»: «**Գուք**»-ը երկրորդ դեմքի անձնական դերանվան հոգնակին է⁷»: Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի»՝ «**Գու (քո, քեզ)**, անձնական դերանվան երկրորդ դեմք, եզակի թիվ, գործածվում է խոսակցին դիմելիս: Իսկ **Գուք, (ձեր, ձեզ)**՝ անձնական դերանվան հոգնակի թվի երկրորդ դեմքը կիրառվում է մի քանի կամ շատ մարդկանց դիմելիս, ինչպես նաև որպես մեկին դիմելու, **քաղաքավարական ձև**»⁸: Այդպես է բացատրված նաև «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» գրքում. «Անձնական դերանվան 2-րդ դեմքի հոգնակիի ձևերը կարելի է կիրառել նաև եզակիի նշանակությամբ: Այդպիսի կիրառությունը կոչվում է քաղաքավարական հոգնակի»⁹:

Անշուշտ, մեզ հետաքրքրում է հարգալից վերաբերմունք արտահատող **Գուք**-ը: Սակայն **դու/Գուք** դիմելաձևերի ընտրությունը պայմանավորված է՝

- ա) հաղորդակցվողների հասարակական կարգավիճակով և հասարակական դերով,
- բ) նրանց հարաբերությունների բնույթով,
- գ) իրադրության թելադրանքով (պաշտոնական – ոչ պաշտոնական),
- դ) ազգային ավանդույթով,
- ե) քաղաքակրթության աստիճանով:¹⁰

Ուսումնասիրելով տարբեր ազգերի, ինչպես նաև հայ գրականության մեջ, հայկական միջավայրում **Գու/Գուք** դիմելաձևերի գործածությունը՝ հանգել ենք այն եզրակացության, որ **դու/Գուք** դիմելաձևերը պայմանավորված են խոսքային իրադրությամբ, մարդկանց հասարակական կարգավիճակով: Պետք է նշել, որ ոչ բոլոր լեզուներն են ճանաչում այս տարբերակումը. լեզուների մի խմբի այն կամ ընդհանրապես բնորոշ չի եղել և բնորոշ չէ, կամ ինչ-որ ժամանակ բնորոշ եղել է, այժմ՝ ոչ: Օրինակ՝ ժամանակակից անգլերենում, ի տարբերություն հայերենի, այս դիմելաձևի ձևային տարբերակում չկա: Դիմային և ձևային նույնությամբ, սակայն, թվային հակադրությամբ հատկանշվող այս ձևերի բոլոր նշանակություններն արտահայտվում են հոգնակի **You** ձևով:

«Դիմելաձևերը խոսքային էթիկետում կարևոր դեր են կատարում: Սովորաբար դրանք երկու գործառույթ են իրականացնում՝ գրավել խոսակցի ուշադրությունը, բնութագրել այն մարդուն, որին դիմում ենք և արտահայտել մեր վերաբերմունքը տվյալ մարդու նկատմամբ»¹¹, – գրում է ռուս լեզվաբան Ի. Ստերնինը: **Գու/դուք**-ի ընտրությունը նաև հոգեբանական հիմնավորում ունի՝ լեզվում պահպանել քաղաքավարական-հարգական ձևը: Որոշ լեզուների գրավոր տարբերակներում այն արտահայտության ձև

7 Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. 1, եր., 1976, էջ 314:

8 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, ՀԽՍՀ ԳԱ, հատ. 1, եր., 1969, էջ 539:

9 Ավետիսյան Յու., Սարգսյան Ա. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, 2014, էջ 148:

10 Տես Фармановская Н. И., Русский речевой этикет, М., 2014, էջ 79:

11 Стернин И. А., Русский речевой этикет, В., 1996, с. 37.

չունի, սակայն բանավոր խոսքում հաղորդակցական բոլոր ձևերում՝ սկսած պաշտոնականից մինչև նեղ անձնական հարաբերություններ, **դու/դուք-ի** ոճախմաստային տարբերակումը կատարվում է համապատասխան հնչե-րանգի միջոցով: **Դու/Դուք-ի** տարբերակումը հայերենի առանձնահատկություններից է, սակայն այս առանձնահատկության գործածական յուրահատկություններն ու գործառական ոլորտները լիարժեքորեն ուսումնասիրված չեն, այսինքն՝ **դու/Դուք-ի** ընտրության և գործածության առումով լեզվական, ոճական, էթիկետային նորմավորման գործընթացում անելիքներ կան:

Դու/Դուք դիմելաձևերի ընտրությունը կախված է՝

ա) խոսքային իրադրությունից (պաշտոնական-կիսապաշտոնական-ոչ պաշտոնական),

բ) ծանոթության աստիճանից (ծանոթ-անծանոթ, լավ ծանոթ),

գ) խոսող-խոսակիցների բնույթից (կին-տղամարդ, ենթակա-ղեկավար, ավագ-կրտսեր),

դ) հասցեատիրոջ (ու՜մ է ուղղված խոսքը) նկատմամբ ունեցած վերաբերմունքից (մտերմական-հարազատական, հարգալից-չեզոք):

Դու-Դուք դիմելաձևերը խոսքային էթիկետի բաղադրիչներից են. «էթիկետը ծանոթների-անծանոթների հետ հաղորդակցման ժամանակ փրկության միջոց (օղակ) է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է գտնել ընդհանուր թեմաներ, մեղմացնել լարվածությունը, խոսակիցների միջև ընդգծել որոշակիությունը ևն»¹²:

Ավանդաբար հայերենի խոսքի էթիկետում **Դուք** դիմելաձևը եղել է ու կա որպես հարգանքի դրսևորման ձև խոսակցի հանդեպ:

Դուք-ը գործածվում է՝

ա. անծանոթի (կամ քիչ ծանոթի) հետ շփվելիս. այստեղ կարևորվում է շփման վայրը (փողոց, խանութ, ռեստորան, շնորհանդես ևն),

բ. պաշտոնական իրադրություններում (միջպետական հանդիպումներ, համաժողովներ, գիտաժողովներ ևն),

գ. ընդգծված հարգանքի դրսևորման կամ զուսպ հարաբերություններ ունենալու անհրաժեշտությամբ,

դ. ավագներին, մեծահասակներին և պաշտոնով ավելի բարձր դիրք գրավողին դիմելիս: Օրինակ՝ կրտսեր մարդը չի կարող ավագին դիմել «պրիվետ»-ով, կասի՝ Բարև Ձեզ:

Այս դիմելաձևը գործածվում է նաև՝ դիմացինի հետ հաղորդակցվելու նպատակից ելնելով կամ գրուցակիցներին միանալու նպատակով: Հայերենի խոսքային էթիկետում **Դուք**-ը բոլոր դեպքերում ընդգծված հարգանքի արտահայտման ձև է: Բերենք մի օրինակ Հր. Աճառյանի կյանքից. «Հանկարծ հնչեց դռան զանգը. Եգիպտոսից ներգաղթած մի ընկեր էր: Մինչ մարդը միջանցքում ներկայացնում էր իրեն, Աճառյանը հանկարծ հարցրեց.

– Իսկ ի՞նչ **եք** ուզում:

– Ինձ ուղարկել են, որպեսզի ծանոթանաք իմ արաբերենի գիտելիքներին, հայտնեք **Ձեր** կարծիքը, որպեսզի ինձ գործի ընդունեն:

– Անշուշտ **Դուք** ինձանից լավ արաբերեն պիտի իմանաք, քանի որ

¹² Иполигова Н. А., Русский язык и культура речи, М., 2007, с. 178.

Եգիպտոսում արաբական կրթություն եք ստացել, ապրել եք տասնյակ տարիներ: Ես ի՞նչ իրավունք ունեմ **Ձեզ** ստուգելու»¹³:

Բայց արդյո՞ք միշտ է այդպես. այս դիմելաձևի միջոցով միշտ է հարգանք արտահայտվում: Խոսողը խոսքային իրադրությունից, խոսքի նպատակից, տեղից և հարաբերության բնույթից կախված՝ ինքն է ընտրում տվյալ ձևը: Դա կոտեսներ **Դուք**-ից **դու**-ի անցման մեջ: «**Դու**»-ն գործածվում է՝

- ընկերական, բարեկամական հարաբերություններում, ծանոթների միջավայրում և այլն,
- ոչ պաշտոնական իրադրություններում,
- նեղ-անձնական-մտերմիկ հարաբերություններում,
- տարիքով փոքրին կամ պաշտոնով ավելի ցածր դիրք գրավողին դիմելիս:

Արդյո՞ք բոլոր դեպքերում է սա պարտադիր պայման: Ասում են՝ չկա կանոն, որ բացառություն չունենա: Հայերենի խոսքային էթիկետում դիմելաձևերի մեջ ժամանակի ընթացքում փոփոխություններ են տեղի ունեցել: Դա կապված է թե՛ սոցիալ-տնտեսական հարաբերությունների, թե՛ հասարակական կյանքում տեղի ունեցած իրադարձությունների, թե՛ մարդու մտածելակերպի փոփոխությունների հետ:

Դուք-ից **դու**-ի անցում՝

ա) հայկական ավանդական ընտանիքներում կինը ամուսնու հետ խոսում էր **Դուք**-ով, երեխան ծնողի հետ հաղորդակցվում էր **Դուք**-ով: Բերենք օրինակներ Բաֆֆու ստեղծագործություններից:

«- **Դուք** որքան անհոգ եք, այ՛ մարդ,- ասաց տիկին Սկուիին յուր ամուսնուն,- չէ՞ որ մեծ Պասը եկավ, բայց **Դուք Ձեր** որդու հարսանիքի մասին չեք մտածում:

- Ի՞նչ մտածել, - պատասխանեց Մահտեսի Ավետիսը սառնությամբ,- առավոտյան տյառնընդառաջ է, գիտեմ, որ **դու** այս երկրի սովորության համաձայն գնալու ես խնամատես» (ամուսին և կին):

«Երեխան ձջում էր ցավից: Նրա ձայնը ներս բերեց Սալբիին:

- Մայր, փոխանակ այդ խեղճ երեխան սպանելու, այդ կոշտ մագով նրա մարմինը շփելու փոխարեն հրամայեցե՞ք դրան դեղ տան»¹⁴ (մայր և դուստր):

Հետագա դարերում **Դուք**-ը հայկական ընտանիքներում դարձավ **դու**, հարգանքի **Դուք**-ը վերածվեց **դու**-ի՝ ընդգծելով հարաբերությունների զգացմունքայնությունն ու ջերմությունը:

«- Մայրիկ, - մորը գրկեց Արմենը,- ես կմեռնեմ առանց Հայաստանի...- Կվարժվե՞ս, կընտելանա՞ս, որդիս,- սիրտ առավ հայրը,- հիմա ի՞նչ է Հայաստան գնալ-գալը: Այնտեղ էլ հայրենասեր հայեր են պետք...»

Ուրեմն, Հայաստանը ձեզ համար հյուրանոց է եղել: Հայաստանն իջևանատուն է, հարկադիր վայրէջքի օդանավակայան...

- Փոքր տղա ես, ինձ դաս ես տալիս, ինձ՝ մշեցու զավակիս, հայություն՞ս ես սովորեցնում: Կշտացանք, ջանըմ, այս հայրենիքն էլ ձեզ, հայությունն էլ...»¹⁵:

13 Ստեփանյան Գ., Աճառյանի հետ (Հուշեր), Եր., 1976, էջ 82:

14 Ռաֆֆի, Սալբի, Եր., 1983, էջ 90:

15 Պետրոսյան Վ., Վերջին ուսուցիչը, Եր., 1990, էջ 362:

բ) **Դուք**-ը կարող է դառնալ անհարգալից կամ արհամարհական վերաբերմունքի դրսևորման ձև: Դիրքով բարձր պաշտոնյան իր ենթակայի հետ սկսում է խոսել **Դուք**-ի փոխարեն **դու**-ով: Օրինակ՝

«Պրն Գևորգյան, խնդրեմ ստորագրե՞ք փաստաթղթերը, ամեն ինչ պատրաստ է:

Պաշտոնյան աչքի է անցկացնում թղթերը և ասում.

- Այսքան բացատրել եմ **քեզ**, **Դու** էլի **քու** էջն ես քշում» (կինոյից):

գ) Եթե երկարատև ծանոթությունը վերածվում է մտերմության, ապա **Դուք/դու** դիմելաձևերի մեջ հնարավոր են փոփոխություններ: Ահա այսպիսի օրինակ Աճառյանի կյանքից: Լեզվաբանի գրքի տպագրության հարցով նրա մոտ է գալիս նախկին ուսանողը, որն արդեն սրբագրիչ էր աշխատում խմբագրությունում: Հաճախակի այցելությունների հետևանքով նրանց հարաբերությունները պաշտոնականից վերածվում են մտերմական հարաբերության, և Աճառյանը, որը սովորություն ուներ ուսանողների և անձանոթների հետ խոսել **Դուք**-ով, սկսում է նախկին ուսանողի հետ խոսել **դու**-ով: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հաղորդակցման իրավիճակի փոփոխությունը կարող է հանգեցնել **Դուք**-ից **դու**-ի անցման. պաշտոնական բնույթի հաղորդակցումը վերածվում է մտերմականի:

«Տեղից բարձրացա, մոտեցա ամբիոնին: Աճառյանը, որ նստած էր հենց առաջին շարքի ծայրին, շինելիս փեշից քաշեց: Թեքվեցի դեպի նա, ականջիս ասաց. -Կատակով պատասխանի՞ր, ծիծաղը ամենից հատու զենքն է»¹⁶:

Դուք-ից **դու**-ի անցումը վկայում է հարաբերությունների փոփոխության, վստահության ու անկեղծության մասին: Այսինքն՝ որպեսզի **Դուք**-ը դառնա **դու**, որոշակի ժամանակ է հարկավոր:

դ) Հեռուստահաղորդումների ժամանակ հայտնի ու ճանաչված հաղորդավարի և ոչ պակաս հայտնի ու ճանաչված քաղաքական գործչի, դիվանագետի, գիտնականի և այլոց միջև ծավալված պաշտոնական հաղորդակցման ընթացքում, մանավանդ երբ հեռարձակվող թեման համաժողովրդական հնչեղություն ունի, հաղորդավարը շատ հաճախ ընտրում է **դու**-ով ձևը՝ երկխոսությունն ավելի անբռնազբոսիկ դարձնելու, համաժողովրդական երանգներ ներառելու, հեռուստադիտողի սիրտը շահելու և հավատ-հույս-վստահություն ներշնչելու առումով. արդյունքում **Դուք**-ից **դու**-ին անցնելը կարող է սառեցնել, դանդաղեցնել կամ հաղորդակցման գործընթացի ընդհատման պատճառ դառնալ, անհետաքրքիր ու անհաղորդակից դարձնել էկրանի դիմաց նստածին: **Դուք**-ից **դու**-ի միակողմանի անցումը խոսքային էթիկետի կոպիտ խախտում է:

ե) Ընդհանրապես քաղաքակրթությունը և բարեկրթությունը պահանջում են, որ բարձրակարգ ու բարձրաստիճան պաշտոնյան ևս ենթարկվի էթիկետի նորմերին և դիմացիներին դիմի «**Դուք**»-ով՝ անկախ վերջինիս հասարակական կարգավիճակից, աշխատանքի բնույթից, սեռից, տարիքից ևն: Սակայն շատ դեպքերում իրենցից ցածր դիրքում գտնվողների հետ շփվելիս նրանք գործածում են **դու** դիմելաձևը: Սա տարբեր բացատրություններ կարող է ունենալ. մի դեպքում փորձում են ցուցադրել իրենց մարդասիրական բնավորությունը, շեշտել ընկերական-հովանավորչական հարաբե-

¹⁶ Ստեփանյան Գ., Աճառյանի հետ, Եր., 1976, էջ 131:

րությունները, մյուս դեպքում՝ արհամարհական վերաբերմունքը, երրորդ դեպքում այդ դիմելաձևը կարող է արտահայտել սպառնալիք և այլն: Բոլոր դեպքերում նման դիմելաձևի ընտրության պատճառով հասցեատերը (խոսակիցը) հայտնվում է անհարմար, անհասկանալի դրության մեջ, ամենից հաճախ ընկալվում է վիրավորական, արհամարհական երանգներով: Մյուս կողմից՝ ոգևորվելով «պահի արհեստական հավասարությունից», խոսակիցը կարող է շարունակել նույն ձևով՝ «**դու**»-ով, բայց արդեն այս դիմելաձևի ընտրությունը կարող է հանգեցնել հաղորդակցման ավարտին: Օրինակ՝ «Ձեղավ, չեղավ: Ես չեմ կարծում, թե այդ հարցը կուլեգիա մտնի, ես ամեն ինչ կանեմ, որ...չմտնի, բայց դա ավելի շատ կախված կլինի **Ձեզնից**, այսինքն՝ **քեզնից**, ինչպես ասում են՝ քարն էլ է **քո** ձեռքին, պոպոքն էլ:

Հիմա պոպոքը մենք ենք, քարն էլ **քո** ձեռքին է, այսինքն՝ **Ձեր** ձեռքին: Կհավաքվենք, կմտածենք: Շնորհակալ եմ խորհուրդներիդ համար»¹⁷:

գ) Տղամարդ-կին փոխհարաբերություններում ևս հնարավոր են այս անցումները, բայց դրանք պետք է այնքան նրբանկատորեն արվեն, հատկապես տղամարդու կողմից, որ չվիրավորեն դիմացինին: **Դուք**-ից **դու**-ի անցումը երկուստեք ցանկալի ու հաճելի պետք է լինի, մանավանդ կնոջ համար:

է) Առօրյա-խոսակցական ոճում երկխոսությունների մեջ հնարավոր է **Դուք**-ից **դու**-ի անցում: Սոցիալական որոշ խմբերի համար գոյություն ունի միայն **դու**:

- Բարև **Ձեզ**, կարո՞ղ եք ասել՝ որտեղ է օպերան:

- Բարև, **քու՛րս**, բա ո՞նց չեմ ասի: Էսպես ուղիղ **գնա**, օպերան կգա **քո** առաջ (փողոցի խոսակցություն):

ը) Վիճաբանության, բուռն երկխոսությունների ժամանակ ևս հնարավոր է **Դուք**-ից **դու**-ի անցում: Դա վկայում է անդաստիարակության, անքաղաքավարության, անզսպության մասին: Այստեղ կարևոր դեր է խաղում նաև հնչերանգը, որի միջոցով ընդգծվում է դիմացինի անհարգալից, հեզնական վերաբերմունքը՝ Այդ դու՛ ես ինձ օգնելու (հեզնանք): Դու ավելի լավ է՝ քո մասին մտածիր:

Պետք է նկատել, որ խոսքային էթիկետը թելադրում է պաշտոնական հաղորդակցման դեպքում անգամ բարեկամ-ընկեր-քաջածանոթ մեկին, անգամ կնոջը կամ որդուդ դիմելիս անցնել **Դուք**-ի՝ անկախ այն բանից, որ խոսքային այլ իրադրություններում նույն մարդուն դիմում ես **դու**-ով:

Դու-ից **Դուք**-ի անցում՝

ա) Իրար լավ ծանոթ զրուցակիցներն ամենօրյա հաղորդակցման ժամանակ միմյանց դիմում են **դու**-ով (ոչ պաշտոնական իրադրություն), իսկ պաշտոնական իրադրության դեպքում միմյանց դիմում են **Դուք**-ով: Օրինակ՝ ընկեր(ուհի)ները միմյանց հետ խոսում են **դու**-ով, իսկ ուսանողների ներկայությամբ՝ **Դուք**-ով: Այսինքն՝ փոխվում է խոսքային իրադրությունը, և **դու**-ն դառնում է **Դուք**:

բ) Ժամանակավոր պաշտոնական բնույթ կրող խոսքային հաղորդակցման իրավիճակում **դու**-ն դառնում է **Դուք** հետևյալ դեպքում. երբ երեխա-

17 Պետրոսյան Վ., Վերջին ուսուցիչը, Եր., 1990, էջ 349:

յի և ծնողի աշխատավայրը նույնն է, շփումը կարող է ստանալ պաշտոնական բնույթ (հոր կամ մոր հետ շփվել **Գուք**-ով): Այսինքն՝ հասարակական դերերը փոխվում են. ընտանեկան միջավայրից շփումը տեղափոխվում է պաշտոնական հարաբերությունների հարթակ:

գ) **Գու**-ից **Գուք**-ի անցումը կարող է վկայել խոսակիցների հարաբերությունների վատթարացման մասին: Այդ անցումը խոսում է վիրավորվածության, մյուսի նկատմամբ անհանդուրժողականության մասին: Երբ երկու կողմերն էլ երկար ժամանակ բարյացական հարաբերությունների մեջ են եղել և շփվել են **դու**-ով, հանկարծ անցնում են **Գուք**-ի, որը լուրջ տարածայնությունների ազդանշան է: Օրինակ՝ **Գուք** ասօրվանից ազատված եք աշխատանքից, Գևորգ, կարող եք նոր աշխատանք փնտրել (կինոյից. նրանք մտերիմ ընկերներ էին, և նրանցից մեկն արդեն պաշտոնյա էր):

դ) Ընկերական-մտերմական հարաբերությունների բնույթը պաշտոնական խոսքային հաղորդակցման ժամանակ փոխվում է: Գործընկերային հաղորդակցումը պաշտոնական իրավիճակում ստիպում է միմյանց դիմել **Գուք**-ով: Խորհրդակցությունների, նիստերի, գործնական-պաշտոնական հանդիպումների ժամանակ էթիկետը պահանջում է **դու**-ից **Գուք**-ի անցում: Ահա այսպիսի երկխոսություն նիստից առաջ և նիստի ժամանակ: «-Հերմինե, խնդրում եմ ինձ առաջի՛նը ձայն **չտաս**, ես ելույթ կունենամ վերջում: -Լավ, Արմեն, հասկացա» (մտերմական հարաբերություն):

Նիստի ժամանակ նույն մարդկանց հարաբերության բնույթը փոխվում է՝ անցնելով պաշտոնականի:

- Տիկին Նալբանդյան, կարելի է **Ձեզ** մի հարց տալ:

ե) **Գու**-ն **Գուք**-ի է վերածվում նաև այն ժամանակ, երբ աշակերտ-ուսուցիչ, ուսանող-դասախոս հարաբերության բնույթը մտերմականից վերածվում է պաշտոնականի. նախկին ուսանողը դառնում է պաշտոնատար անձ: Քանի որ երկար ժամանակ շփումը բացակայում էր, ուստի խոսքային էթիկետը պահանջում է դիմել այդ դիմելաձևին՝ հարգական **Գուք**-ին: «Մեր լեզվում գրեթե բոլոր իրավիճակների համար կան շատ հարմար դիմելաձևեր, խոսքային կառույցներ, ի վերջո, **Գուք** հարգանքի հոգնակի, որոնք իմանալն ու գործածելը կնպաստեն արդյունավետ շփմանը»¹⁸:

Ավաճին ուզում ենք հավելել՝ տարբեր ազգերի խոսքային էթիկետում, առանձնապես գործարար հաղորդակցման իրավիճակներում, **Գուք** դիմելաձևի գործածությունն այնքան էլ ընդունելի չէ. նման դիմելաձևը վստահություն չի ներշնչում, և արդյունավետ շփում ակնկալելն անհույս է, օրինակ՝ իտալացիները ծանոթությունից հետո անմիջապես անցնում են **դու**-ի¹⁹: Մահմեդական երկրներում **Գուք** դիմելաձևը գործածվում է մեկից ավելի մարդկանց դիմելիս, միմյանց դիմում են **դու**-ով՝ ավագ թե կրտսեր²⁰: Հավատարիմ մնալով լեզվի այն պահանջին, որ հնարավորինս պետք է խուսափել դերանունների անհարկի գործածությունից, իրադրական խոսքի շատ ձևերում **Գուք**-ը բացակայում է, սակայն մենք զգում ենք նրա տեղն ու դերը, նրա մասին հուշում են՝

18 Սարգսյան Լ., Խոսքային էթիկետ, «Վէմ», N 2 (54), ապրիլ-հունիս, 2016, էջ 7:

19 Տե՛ս tuttaitalia.org

20 Տե՛ս arabian-persian.livejournal.com

- ա) կոչականները,
- բ) հարգական տիտղոսները,
- գ) պաշտոնական դիմելաձևերը,
- դ) բարձրաճ շատ բառեր,
- ե) նրա հետ կապված բառաձևերը,
- զ) հնչերանգային ընդգծված արտաբերումը (բանավոր խոսքում) ևն:

Դիմելաձևերի մեջ մեծ նշանակություն ունի հասարակական դերը: Եթե անծանոթի հասարակական կարգավիճակը հայտնի է, ապա դիմելաձևերի մեջ նշվում է նրա մասնագիտությունը կամ զբաղմունքը: Այս դեպքում առաջնորդվում ենք «**հիմա-այստեղ**» բանաձևով: Օրինակ՝ «Բժիշկ, փրկե՛ք իմ որդուն», «Մատուցո՛ղ, խնդրում եմ մոտեցե՛ք»: Այլ հասարակական խմբերում՝ «Հարգարժան՝ դեսպան, Հարգելի՛ հեռուստադիտողներ, Հարգելի՛ ծնողներ, Սիրելի՛ քույրիկ, Քաղաքացի՛ ոստիկան ևն»: Այստեղից հետևություն, որ դիմելաձևերի մեջ կարևոր է ոչ միայն հասարակական դերը, այլև խոսքային իրադրությունը:

Հաղորդակցական իրավիճակն ազդում է **Դուք-դու** դիմելաձևերի ընտրության վրա: Կարևորվում են խոսքային իրադրության մասնակիցները (ով-ում), հաղորդակցման նպատակը, խոսքի առարկան (ինչ-ինչի մասին), հաղորդակցման պայմանները (տեղ, ժամանակ): 21-րդ դարը արագ փոփոխությունների ու զարգացումների դարաշրջան է, և մարդկանց միջև փոխհարաբերությունը, փոխազդեցությունը, պայմանավորված են դիմելաձևերի ընտրությամբ: Անսպասելի ստեղծված իրադրության մեջ մարդիկ պետք է շատ արագ կողմնորոշվեն **դու/Դուք** դիմելաձևերից օգտվելիս: Ավելին՝ ժամանակակից երիտասարդությունն այն կարծիքին է, որ **Դուք**-ի գործածությունն ավելորդ մտատանջության տեղիք է տալիս և խանգարում ձիշտ փոխհարաբերություն հաստատելուն: Մանավանդ որ համացանցային էթիկետում այդ սահմանները վերացած են, հաղորդակցումն իրականացվում է միայն **դու**-ով, որովհետև հաղորդակցվողները գտնվում են հավասար հարթության վրա: Քանի դեռ մեր լեզուն տարբերակում է նույնիմաստ «**դու**» և «**Դուք**» բառաձևերը, յուրաքանչյուր լեզվակիր պարտավոր է ձիշտ, տեղին ընտրություն կատարել՝ հաշվի առնելով վերջիններիս գործածության լեզվաոճական, էթիկետային կանոնները:

Ամփոփում

Մարդիկ կամա թե ակամա շփվում են միմյանց հետ, և անհրաժեշտություն է առաջանում պահպանելու խոսքային էթիկետի որոշ կանոններ: **Դու/Դուք** դիմելաձևերի գործածությունը խոսքային էթիկետի բաղադրիչներից է, և **դու/Դուք** դիմելաձևերի ընտրությունը կախված է խոսքային իրադրությունից, ծանոթության աստիճանից, խոսող-խոսակիցների բնույթից ևն:

Դուք-ը գործածվում է անծանոթի հետ շփվելիս՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, գործընկերների հետ շփվելիս, պաշտոնական իրադրություններում, ընդգծված հարգանքի դրսևորման կամ զուսպ հարաբերություններ ունենալու անհրաժեշտությամբ: **Դու**-ն գործածվում է

ընկերական, բարեկամական հարաբերություններում, ոչ պաշտոնական իրադրություններում, նեղ-անձնական-մտերմիկ հարաբերություններում, տարիքով փոքրին կամ պաշտոնով ավելի ցածր դիրք գրավողին դիմելիս: Սակայն խոսակիցների հարաբերությունների փոփոխությամբ պայմանավորված՝ այս դիմելաձևերի բնույթը կարող է փոխվել. **դու**-ն կարող է դառնալ **Դուք** և հակառակը՝ **Դուք**-ը **դու**:

Անահիտ Զ. Ադիլխանյան – գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ ոճագիտություն, հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմնունքներ, ժամանակակից հայոց լեզու, խոսքային էթիկետ և գործնական հաղորդակցման հմտություններ:

Summary

THE APPEAL OF «you»/«You» IN ARMENIAN SPEECH ETIQUETTE

Anahit Z. Adilkhanyan

Key words– Speech etiquette, appeal you/You, communicative situation, social role, official, unofficial situation, degree of acquaintance, familiar attitude, characteristics of the speakers, change of the attitude, change from “you” and “You” for “you”.

All of us anyway communicate with others, and it is important to follow some etiquette, when it comes to negotiating, meetings with clients, simply politeness.

It is necessary to appeal with “You” to all unfamiliar people independently from the age and social status, to the employees, partners and so on. It is allowed to use “you” towards the members of the family, friends and children. In the collective it is possible only between the colleagues, who make friends, but in an official situation it is necessary to apply with “You”. For a time “you” and “You” have undergone many transformations. A big etiquette importance has got the possible change from “you” to “You” and from “You” to “you”. The transition like this bear important changes in the attitude of people to each other, and this factor of attitudes comes to the fore in this case.

ОБРАЩЕНИЯ НА «ТЫ»/«ВЫ» В АРМЯНСКОМ РЕЧЕВОМ ЭТИКЕТЕ

Анаит З. Адилханян

Ключевые слова – речевой этикет, обращение на ты/Вы, коммуникативная ситуация, социальная роль, официальная/неофициальная обстановка, степень знакомства, фамильярное отношение, характеристика говорящих, изменение отношений, переход с «ты» на «Вы» и с «Вы» на «ты».

Все мы так или иначе общаемся с другими людьми, и соблюдать некоторый этикет важно, когда дело касается ведения переговоров, встреч с клиентами, просто вежливости. Обращаться на «Вы» нужно ко всем незнакомым людям, независимо от их возраста и социального положения, сотрудникам, партнерам и т. д. «Ты» приемлемо только по отношению к членам своей семьи, друзьям, маленьким детям. В коллективе оно возможно лишь между коллегами, которые дружат, но в официальной обстановке необходимо переходить на «Вы». Но «ты» и «Вы» пережили множество трансформаций. Большое этикетное значение имеет возможность перехода партнеров по общению с одной формы обращения на другую. Возможны переходы с «ты» на «Вы» и с «Вы» на «ты». Такой переход знаменует важные изменения в отношении людей друг к другу: именно фактор отношения выступает в этом случае на передний план.

REFERENCES

1. **Ac’aryan Hr.**, Liakatar qerakanut’yun, Ye’r., 1952 (in Armenian).
2. **Agh’ayan Ed.**, Ardi hayereni bacatrakan bararan, Ye’r., 1976 (in Armenian).
3. **Avetisyan Yu., T’elyan L., Sargsyan A.** ev urishner, Hayoc lezu ev’ xosqi mshakuyt’, Ye’r., 2016 (in Armenian).
4. **Belikov V. I., Krisin L. P.**, Sociolingvistika, Uchebnik dlja bakalavriata I magistratury, M., 2016 (in Russian).
5. **Ipolitova N. A.**, Russkij jazik i kultura rechi, M., 2007 (in Russian).
6. **Farmanovskaja N. I.**, Russkij rechevoj etiket, M., 2014 (in Russian).
7. **Наманцаян нутер.**
8. **Haxverdyan L.**, Zrucner lezvi masin, Ye’r., 1986 (in Armenian).
9. **Hay gegh’arvestakan grakanut’yun** (in Armenian).
10. **Sargsyan L.**, Xosqayin et’iket, "Vem", Ye’r., N 2 (54), 2016 (in Armenian).
11. **Sternin I. A.**, Russkij rechevoj etiket, Voronezh, 1996 (in Russian).

ՀԵՐՄԱՆՆԵՐՆԵՐՆԵՐ
 ԳԵՂԱՄԻԱՆՆԵՐՆԵՐՆԵՐՆԵՐ
 2019
 ԺԿ (ԺԷ) ԳՄՄԻՐ, ԹԻՒԼ 1 (65), ԽՈՍՈՒՄՆԵՐՆԵՐՆԵՐՆԵՐ
 ՎԵՐ ԽԱՆԻՆԻՄՆԵՐՆԵՐՆԵՐՆԵՐ